150

1. Ների՛ր ինձ այսօր ու ողորմի՛ր
Քո ողորմությամբ հավիտենական,
Քեզ եմ ես գալիս մեղքերիս բեռով,
Քեզ չեմ ծառայել ճշմարտությունով:

Տուր որ Քեզ, Հիսո՛ւս, կատարյալ նվիրվեմ,
Անձս ուրացած՝ Քեզ պես խոնարհվեմ,
Պաշտեմ Քեզ հոգով, ճշմարտությունով,
Խաչս վերցնեմ,
Գամ Քո նեղ ճամփով (2):

2. Ների՛ր ինձ այսօր, ձգտումներս բոլոր,
Որ ունեցել եմ այս կյանքում մոլոր,
Ձգտումները այդ կտրել են անվերջ
Քո օրհնությունից ինձ անընդմեջ:

3. Քեզ եմ ես գալիս ոչ ինչպես առաջ,
Հոգնել եմ վաղուց վիճակիցս գաղջ,
Տե՛ր Հիսուս, ների՛ր մեղքերս բոլոր,
Ես շատ քայլեցի ճամփեքով մոլոր:

4. Ճամփան այս փշոտ, նեղ ու քարքարոտ,
Տանում է դեպի խոտավետ արոտ,
Տե՛ր Հիսուս, ների՛ր մեղքերս գարշելի,
Տո՛ւր հոգուս գարուն Դու երանելի: